հափառի օրհնութեան կարօտ անձանց բազմութեամբ։ Այդ օրը Կաթուղիկոսը ընդունեց Սինոդի ծառայողներին, զանազան դասակարգի պաշտօնական անձանց, Հոգեւոր Ճեմարանի ուսուցիչներին և աշակերտներին և Վաղարշապատի քահանայից և իշխանաց, որոնք ամենքն էլ յայտնում էին իրանց որդիական ցանկութիւնը Հոգեւոր հօր բարեյաջող շուտափոյթ վերադարձի մասին։ Վեհափառ Տէրը բոլոր ներկայացողներին բաշխեց իւր ջերմագին օրհնութիւնը և հայրական խրատները։ Նոյն օրը 11 ժամին Էջմիածին եկան Երեւանի գաւառապետ Սիլիչը և նահանգապետի առանձին յանձնարարութեանց աստիճանաւոր Քալանթարեանցը, որոնք ուղարկուած էին Երեւանայ նահանգապետ Շալիկովի կողմից ուղեկցելու Վեհափառին, առաջինը Երեւանի գաւառում, իսկ միւսը մինչեւ Դիլիջան։ Ներկայացաւ Վեհին նաեւ Երեւանի փոստ—հեռագրատան կանտորի կառավարիչ պ. Գրիգորն Քնքուշեանց, և յայտնեց թէ Թիֆլիզի փոստ—հեռագրական շրջանի կառավարիչը իւր վրայ պարտք է դրել արտայայտել նորա յարգանքի ողջոյնը և ուղեկցել Վեհափառին մինչեւ Դիլիջան, ուր իրան կը փոխարինէ մի ուրիշ աստիճանաւոր, որ նշանակուած է Վեհին մինչեւ Աղստաֆայ ուղեկցելու։ Պ. Քնքուշեանցը յայտնեց նաեւ, թէ ուղեւորութեան վերաբերեալ բոլոր պատրաստութիւնները արդէն տեսնուած են։ Մէկ ժամին տաճարի զանգերը ծանուցին Էջմիածնայ միաբանութեանն, թէ Հայ եկեղեցու Պետի մեկնելու ժամը մօտեցած է արդէն։ Տաճարի գաւթում (զանգակատան) ժողովուած ամբողջ Միաբանութիւնը դիմեց դէպի Վեհարան հրաժարական համբոյրը տալու իրենց Հոգեւոր Հօրը, և բարի ճանապարհ մաղթելու։

Վեհափառ Կաթուղիկոսը ներքին դահլիճից (ծաղկած սենեակ) ընդունարան դուրս եկաւ և միաբանութեան հետեւեալ խօսքերով խրատեց և հայրական մնաս բարեւն ասաց.

«Սիրելի եղբարք և որդիք, յայտնի լինի ձեզ, որ ես գնում եմ Նորին Կայսերական Մեծութեան տեսակցելու, և մեր աշխարհ գալը շնորհաւորելու. և այս ծերութեանս միջոցին ուղեւորութիւնը յանձն եմ առնում Հայաստանեայց սուրբ եկեղեցու և Հայ